

բար կը վայլեն, կը վաճառուի մէկ ֆրանք և վաթսուն հարիւրչեայ առ հարիւրալիդր:

իսկ աշխատողաց կանայք գրեթէ բան մը չեն վաստրիիր, այլ հանգիստ կեանք մը կ'անցընեն զբաղելով միայն իրենց տնական գործողութեանց, այսինքն է կերակուր պատրաստել, տան մաքրութեան հոգ տանիլ և տղոց վրայ իրենց մայրական պարտքը կատարել. և մինչ բոլոր Գաղղիա կը գանգատի թէ երկիրն երթալով կը նուաղի յիւր բնակչաց, ասոնք զարմանալի բեղմնաւորութիւն մ'ունին և շատ ընտանիք կան մէջերնին որ 40 էն աւելի տղայ ունին, Միով բանիւ հանաց աշխատաւորն այնչափ թշուառ չէ ինչպէս որ կը կարծուի ընդհանրապէս. ընդհակառակն ուրախ զուարթէ կեանք մը կ'անցընէ, և այնչափ աւելի որչափ որ բուռն աշխատած է հանաց մէջ, Ունիննաև ամենայն զբաղանաց միջոցներ՝ ուր կրնան իրենց մարմար կորովութիւնը և աշխուժութիւնը հանդիսացընել, և ես մարզիլ և կրթուիլ անոնց մէջ. ինչպէս են գնդակախաղ, նետաձգութիւն, և այլն, Սակայն առօնցմէ աւելի կը յաճախեն գիներբուաց և զուարճութեան տեղերը, որք այնպէս բազմաթիւ են որ զրեթէ չ տան՝ մէկ զինետուն կը վիճակի, և ուր առանց խնայութեան կը մսխեն իրենց օրական աշխատութեան վարձը. Ամեննեին խնայութեան զաղափար չունին և ըստ աւետարանական պատաւէրի չեն մտածեր երկրորդ օրուան պրուստը. այնպէս որ հարցընելով մի անգում ծերու մը որ շատ ժամանակ հանաց մէջ աշխատած էր, թէ ինչո՞ւ համար խնայութիւն չէր ըրած և քիչ մը դրամ չէր հաւաքած, պատասխան տուաւ թէ «Որչափ որ կը վաստըկէի այնչափ աւելի կը մսխէի». (Ch'est q'tint plus que j'gagnos, tint plus que j'dépinsos).

ԳԱՂԴԻԱԿԱՆ ՆՈՐ ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆԸ

1894 դեկտ. 10ին շաբաթ օրը երեկոյեան ժամը վեցին, տէրութեան ելմուխ պաշտօնարին օրինօք վաւերացեալ փոխառութեան մասնակցողք, տէրութեան Դանձատան մէջ թափեր էին 2340 միլիոն ֆառանք:

Այս ահագին գումարը՝ որոյ կշիռն է իրբեւ քառանոց ոսկի 755,000 հազարակրամ, և 11,700,000 հազարակրամ արծաթէ ստակ, միայն զեւա առաջին մասն էր այն ահազին զրամագլխոյն. Տէրութիւնը բովանդակ փոխառութեան համար կը պահանջեր 869 միլիոն իրբեւ առաջին հատուցումն (vorsessment). փոխառութիւնն ստորագրողք ընդհակառակն՝ տէրութեան տուին 14 միլիառ ու կէս (14 հազար հինգ հարիւր միլիոն) յորոց 2,340 միլիոն իրբեւ առաջին վճարումն, Ամէն լրագիրք, նոյն իսկ ներկայ կառավարութեան ընդդիմա-

խօսք, ողջունեցին և դրուատեցին ըստ պատշաճի այս մեծահռչակ դրամական յաջողութիւնը:

Նոյն իսկ օտարք թերթք իրենց զարմանքն և ապշութիւնն բացուարեցին այլ և այլ կերպով: Բարեկամ տէրութիւնք և ազգք ալ չափ չդրին իրենց գովեստից և դրուատեաց. իսկ անտարբերք կամ թըշնամիք, ստիպուեցան խոսովանել որ անկարելի էր շխոնարհիլ այս զարմանալի արտայայտութեան տաշն, ՚ի պատիւ ։ աղջիյ դրամական զարմանալի վարկին:

Եւ աիրաւի, Եւրոպայի մէջ չկայ ուրիշ երկիր կամ ազգ մը՝ որ կարենայ քանի մը ժամու մէջ այշափ ահազին գումար մը գտնել իր խնայութեան արկեղ մէջ, Ռյչափ ալ պաղութեամբ կամ հանդարտութեամբ բննենք այս մեծ գործը. համոզուած ենք և սէտք ենք միշտ կրկնել որ միայն Գաղղիա կարող է իւր տրամադրութեան տակ ունենալ այսպիսի շացուցիչ գէզ մը միթիոններու: Երբ Ռուսիա, Գերմանիա, Փորմուգալ, Սպանիա, Խոալիա, Փոխառութիւն մը կընքն՝ սուհպուած են նոյն փոխառութիւնը միանգամայն Եւրոպայի բազմաթիւ մեծամեծ հրապարակաց վրայ հրատարակել: Եւ գարձեալ ասոնց մէջ ալ՝ ամենէն աւելի փոխառուն միշտ Գաղղիական հրապարակն եղած է. ամէնուն ծանօթ է գարձեալ որ գրամական ոչ մի կարեւոր գործողութիւն կարելի է ՚ի գլուխ հանել՝ առանց գաղղիական ծեննտուութեան: Այս օգնութեանց առաջինն և ամենէն կարեւոր մասը զգաց մեծն Ռուսիա, որ հինգ վեց տարի է միշտ Գաղղիոյ ոսկւոյն ձեռն կը կարէսէ: Խոալիա ևս խիստ լաւ կը ճանչնայ այս պէտքը, որ սակայն ամէնուն ալշատ ծանօթ պատճառաց համար, չի կրցաւ իր թուղթը Գաղղիոյ ձեռքը յանձնել, և միշտ նոյն խեղճ գիրքին մէջ մնաց: Իսկ Անգղիա, մեծն, հզօրն և հարուստն Անգղիա, որոյ հարուստ դաղթականութեանց բնակչաց թիւն է 300 միլիոն, և որոյ վարկը միայն կրնայ բաղդատուիլ Գաղղիոյ վարկին հետ, այս Անգղիան ևս գեռ քիչ ատեն է տեսաւ որ իւր դրամական առաջին և ամենամեծ հաստատութիւնն իսկ 75 միլիոն ֆրանք արժէից ոսկւոյ փոխառութիւն մը կնքեց Գաղղիոյ Դրամատան հետ:

Իսկ Գաղղիա՝ եթէ պէտք ունենայ՝ նոյն իսկ իր երկրին մէջ կը գտնէ պէտք եղած դրամը, և պէտքէն ալ աւելի և շատ աւելի. վասըն զի վերջին փոխառութիւնը 47 անգամ գոցուեցաւ. իսկ 1886ին երբ տէրութիւնը կէս միլիառ կը վափաքէր, տասը միլիառէն աւելի գտաւ:

Ընթերցողք չկարծեն թէ ստորագրողաց գլխաւոր պատճառն է՝ տէրութեան գանձատան շնորհած շահաւոր պայմանք կամ արդիւնք. ոչ, Գաղղիոյ ազգային վարկը այնքան մեծ և հաստատուն է՝ որ ոչինչ շահով մ՚իսկ կը գոհանան փոխառուք. յիրաւի միայն Անգղիա է որ Գաղղիայէն աւելի քիչ շահ կու տայ: